կան բնաղաւառին են վերաբերում եւ որոնց շաղկապող գլխաւոր օղակը, լեզուն, այլ եւ ազգային ընդհանուր դիտակցութիւնը, մէկ է եւ ընդհանուր, բոլոր հայերի համար անխտիր, լինին նրանք Հայաստանում թէ Անդրկովկասի միւս մասերում եւ կամ Ռուսաստանում, անդամ արտասահմանում:

Այսպէս դատելով է նաեւ, որ մենք շարունակ եւ իրաւացիօրէն խարանում ենք հայ բոլշեւիկների ազգային քաղաքականութիւնը: Փոխանակ ջանալու, որ դէթ մշակութապէս արտասահմանի հայութիւնը կապուի մայր երկրի հետ, վերջինիս շարունակ վանում է իրենից, փոխանակ կենդրոնաձիգ ոյժ դառնալու եւ խրախուսելու նման տարրերը դուրսը, հակառակն է անում:

Կարճ՝ ազգային-մշակութային ինքնավարութեան պահանջը մեր ազգային քաղաքականութեան հիմնաքարերից մէկը պիտի կազմէ:

Հրաժարուիլ նրանից՝ նշանակում է հաշտուիլ այն մտքի հետ, որ Հայաստանից դուրս գտնուող հարիւր հազարաւոր ազգակիցներ վաղ թէ ուշ ուծանան իրենց հայրենի մարմնից, փոշիանան մեզ համար եւ պարար դառնան ուրիշների համար: Նման մտքի հետ հաշտուել չի կարող հայութիւնը: Աւելի հեշտ է հաշտուիլ մէկ, երկու գաւառի, քան հարիւր հազարաւոր ցեղակիցների վերջնական կորստեան մտքի հետ: Աւելի լաւ է հրաժարուիլ բացարձակ անկախութեան իրականացումից, բայց շարունակել հոգեկան-մշակութային կապը ազգի զանազան հատուածների միջեւ, քան՝ անկախութեան գաղափարին այնպիսի մեծարժէք գին վճարել, որպիսին ազգի մեծաթիւ, կենդանի հատուածներն են:

Եւ սակայն դրանք իրար բացասող, ժխտող մտքեր չեն երբեք: Բաւական է, որ Անդրկովկասի ժողովուրդները իրենց առաջնորդ ունենան անխտիր եւ հաւասարապէս բոլորի շահերը. հարկաւոր է, որ ազգային ինքնորոշման իրաւունքը չզլացուի Ղարաբաղի, Ջաւախքի հայութեան, այլ եւ ուրիշ ազգային հոդամասերի. հարկաւոր է ճանաչել եւ կիրառել ազգային-մշակութային ինքնավարութիւնը, հէնց Խթոնիայից օրինակ առնելով. հարկաւոր է, ասում ենք, ընդհանուրի շահերը բարձր դասել մասնակի շահերից, եւ այդ ժամանակ ինքնին իրականացած կը լինի Անդրկովկասեան ժողովուրդների անխարդախ եղբայրութիւնը:

Կարո՞ղ են խորհուրդները իրականացնել այդ, թէկուզ իրենց վարչաձեւի շրջանակում, նրա օրէնքների գործադրութեամբ,— առաջին գնահատողը մենք պիտի լինինք: Եթէ ոչ՝ վաղ թէ ուշ նա պէտք է անպայման իրականանայ: Անդրկովկասի ֆեդերացիան կամ կոնֆեդերացիան նման հիմունքների վրայ միայն բարձրանալ կարող է, եթէ ուզում ենք որ ամուր լինին այդ հիմերը:

Առաջադրուած մշակութային-ինքնավար եւ բոլոր պահանջները վերաբերում են ոչ միայն հայերին, այլ եւ թաթարներին, ռուսներին եւ Անդրկովկասի ուրիշ ազգութիւններին: Վրացիները, ճիշդ է, ամենից փիչ չահադրգռուած են մշակութային ինքնավարութեան խնդրով, բայց նրանք չեն կարող, պէտք չէ որ անտես անեն միւսների կենսական շահերը: